ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06» հունիսի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են համայնքի ավագանու 15 անդամներից՝ Նորայր Սանթրոսյանը, Հայկ Վարդանյանը, Լուսինե Երիցյանը, Գոռ Մարկոսյանը, Գայանե Մելքումյանը, Արթուր Պապանյանը, Հուսիկ Գրիգորյանը, Կարինե Մարտիրոսյանը, Գասպար Բաղդասարյանը, Քյալո Հասոյանը, Մետաքսյա Մարգարյանը, Գրիշա Կոբալյանը:

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, քանի որ նիստին մասնակցում են ավագանու անդամների կեսից ավելին:

Նիստը վարող՝ համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյան:

Արձանագրող՝ Արմինե Պետրոսյան:

Համայնքի ավագանու նիստին մասնակցում են՝ Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կարեն Խաչատրյանը, Ջովք գյուղի վարչական ղեկավար Նորիկ Գևորգյանը, աշխատակազմի աշխատակիցներ:

Աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը հրապարակեց, որ ավագանու անդամ Գրիշա Կոբալյանը տեղեկացրել է բացակայության մասին, այն է՝ առողջական խնդիրների պատճառով չի կարող ներկայանալ նիստին:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին:
3. Ջրվեժ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններին արձակուրդ տրամադրելու համաձայնություն տալու մասին:
4. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
5. Հողամասը և շինությունները համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
6. Ջրվեժ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 6-ի՝ վեցերորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստի հետևյալ օրակարգը.

1)Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին:

2)Ջրվեժ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններին արձակուրդ տրամադրելու համաձայնություն տալու մասին:

3)Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

4)Հողամասը և շինությունները համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

5)Ջրվեժ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 14
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ - ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Հուսիկ Գրիգորյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը, «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Ջրվեժի համայնքապետարանի կողմից կազմակերպված հանրային քննարկումների բաց լսումների արդյունքները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը կից գիտամեթոդական խորհրդի 2025 թվականի մայիսի 22-ին ընդունված որոշումը,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հուշարձանի հարակից պուրակի վերանորոգման, ինչպես նաև երկրի սահմանների պաշտպանության և Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների» ձեռք բերման գնման գործընթացն իրականացնել մեկ անձից գնման ձևով, պայմանագիր կնքելով «Սևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, քանի որ կազմակերպության կողմից ներկայացված նախագիծը արժանացել է հավանության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 14
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

3. ԼՍԵՑԻՆ - ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Լուսինե Երիցյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների գրություններով ներկայացված խնդրանքը՝ աշխատակիցներին հասանելիք արձակուրդները 2025 թվականի հուլիսի 7-ից տրամադրելու մասին,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մսուր-մանկապարտեզ», «Ջրվեժ համայնքի Ձորաղբյուրի մանկապարտեզ» և «Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություններ համայնքային ոչ առևտրային

կազմակերպությունների աշխատակիցներին հասանելիք արձակուրդները 2025 թվականի հուլիսի 7-ից տրամադրելուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 14
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

4.ԼՍԵՑԻՆ – ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՑԵՑ – Համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:
Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 17,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի ու վրան ամրակայված 17,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Մարգո Մնացականի Մինասյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 17,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի ու վրան ամրակայված 17,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 17,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի ու վրան ամրակայված 17,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Մարգո Մնացականի Մինասյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 17,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը և վրան ամրակայված 17,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Մարգո Մնացականի Մինասյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 278 238 (երկու հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր երեսունութ), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 55 144 (հիսունհինգ հազար մեկ հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 14
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

5.ԼՍԵՑԻՆ – ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՑԵՑ – Համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Հուսիկ Գրիգորյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ 55» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0217 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 26,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և վրան ինքնակամ կառուցված թիվ 1 տնտեսական շինության՝ 7,0 քառ.մետր և թիվ 2 պարիսպի՝ 0,36 քառ.մետր արտաքին մակերեսներով, նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցներ իրականացրած անձի՝ Արմեն Պողոսյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը 07-057-0217 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 26,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և վրան ինքնակամ կառուցված շինությունների նկատմամբ (թիվ 1 տնտեսական շինություն՝ 7,0 քառ.մետր և թիվ 2 պարիսպ՝ 0,36 քառ.մետր արտաքին մակերեսներով):

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0217 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 26,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և վրան ինքնակամ կառուցված թիվ 1 տնտեսական շինության և թիվ 2 պարիսպի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Արմեն Պողոսյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0217 կադաստրային ծածկագրով թաղամասում գտնվող 26,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը և վրան ինքնակամ կառուցված թիվ 1 տնտեսական շինությունը՝ 7,0 քառ.մետր և թիվ 2 պարիսպը՝ 0,36 քառ.մետր արտաքին մակերեսներով, ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Արմեն Պողոսյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 275 462 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր վաթսուներկու), իսկ 7,36 քառ.մետր ընդհանուր մակերեսով տնտեսական շինության և պարիսպի վաճառքի արժեքը՝ 40 112 (քառասուն հազար մեկ հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 14
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՑԵՑ – Համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 9-ը, ժամը 17:00-ն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 14
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ
ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ
ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ն.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Արձանագրող՝ *Ա.Պետրոսյան*